GEF

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՄԱԶԾ-ԳԷՀ միջին ծավալի ծրագիր

ԲԱՂԱԴՐԻՉ 1

Պահպանվող տարածքների համակարգի ռացիոնալացում

Արդյունք 2

Արգելավայրերի կառավարման դերերի և պարտականությունների հստակեցման նպատակով ինստիտուցիոնալ կապերի ձևավորում

ԶԵԿՈՒՅՑ

Պետական արգելավայրերի վերաբերյալ համայնքների իրազեկվածության մակարդակի ուսումնասիրություններ

ԵՐԵՎԱՆ 2011

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ Ո Ւ Ն

Ներածություն 3

ԲԱԺԻՆ 1. Արգելավայրերի վերաբերյալ համայնքների իրազեկվածության մակարդակի և կառավարման գործընթացներին ՏԻՄ-երի մասնակցության պատրաստակամության ուսումնասիրության մեթոդները 4

1.1 Համայնքների ընտրությունը 4

1.2 Համայնքներում հարցումների կազմակերպումը 5

ԲԱԺԻՆ 2. Արգելավայրերին հարակից համայնքների կարողությունները 7

ԲԱԺԻՆ 3. Գործող արգելավայրերին հարակից համայնքների բնակչության իրազեկվածության մակարդակը 9

3.1. Արգելավայրերի առկայության վերաբերյալ հարցվողների տեղեկացվածությունը 9

3.2 Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա արգելավայրի ազդեցությունը 11

3.3 Բնապահպանական օրենքների վերաբերյալ ազգաբնակչության գիտելիքների մակարդակը 12

3.4 Բնապահպանության ոլորտում առավել կարևոր դեր ունեցող կառույցների վերաբերյալ պատկերացումները 13

3.5 Արգելավայրերի արդյունավետ կառավարման գործընթացներում համայնքների մասնակցության հնարավորությունները 14

3.6 Արդյունքների ամփոփում 14

ԲԱԺԻՆ 4. Նոր ստեղծվող արգելավայրերին հարակից համայնքների բնակչության իրազեկվածության մակարդակը 16

4.1. Նոր ստեղծվող արգելավայրերի վերաբերյալ ազգաբնակչության տեղեկացվածության մակարդակը 16

4.2. Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա նոր ստեղծվող արգելավայրի ազդեցությունը 18

4.3. Բնապահպանական օրենքների վերաբերյալ բնակչության գիտելիքների մակարդակը 20

4.4. Բնապահպանության ոլորտում առավել կարևոր դեր ունեցող կառույցների վերաբերյալ պատկերացումները 21

4.5. Արգելավայրերի արդյունավետ կառավարման գործընթացներում համայնքների մասնակցության հնարավորությունները 22

4.6 Արդյունքների ամփոփում 22

ԲԱԺԻՆ 5. Գործող և նոր ստեղծվող արգելավայրերին հարակից համայնքներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների համեմատական վերլուծություն 23

Հավելված 1 24

Հավելված 2 25

Հավելված 3 29

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում գործում են 27 պետական արգելավայրեր, որոնցից 13-ը կառավարվում են ՀՀ բնապահպանության, 13-ը՝ ՀՀ գյուղատնտեսության և մեկը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից:

Արգելավայրերի կառավարման խնդիրներով պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) համագործակցությունը հիմնականում սահմանափակվում է սահմանների ճշգրտման և համաձայնեցման գործընթացով և ՏԻՄ-երը ընդգրկված չեն արգելավայրերի կառավարման գործընթացում:

<<Հայաստանի պահպանվող տարածքների զարգացում>> ՄԱԶԾ/ԳԷՀ միջին ծավալի ծրագրում տրվում է առանցքային նշանակություն արգելավայրերի կառավարման գործընթացում տարբեր կազմակերպությունների ինստիտուցիոնալ կապերի ձևավորմանը: Սույն խնդրի լուծման համար կարևորվում է արգելավայրերի վերաբերյալ համայնքների իրազեկվածության մակարդակի և կառավարման գործընթացին պատրաստվածության համայնքային կարողությունների բացահայտումը, որը հնարավորություն կտա ձևավորելու հստակ մոտեցումներ և կազմակերպելու անհրաժեշտ գործողություններ արգելավայրերի կառավարման գործընթացում ՏԻՄ-երի ներգրավման համար:

Սույն ուսումնասիրությունները կատարվել են 2010 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Տվյալների վերլուծությունը և արդյունքների ամփոփումը ընդգրկել են 2010 թ. դեկտեմբեր և 2011 թ. հունվար ամիսները:

<u>Աշխատանքի նպատակը.</u> Արգելավայրերի վերաբերյալ համայնքների իրազեկվածության մակարդակի և կառավարման գործընթացին համայնքների պատրաստվածության բացահայտման ուսումնասիրությունների նպատակներն են.

1. Ներկայացնել ՏԻՄ-երին <<Հայաստանի պահպանվող տարածքների զարգացում>> ՄԱԶԾ/ԳԷՀ միջին ծավալի ծրագրի նպատակներն ու խնդիրները.
2. Հարցումների միջոցով բացահայտել արգելավայրերի վերաբերյալ գյուղապետարանների աշխատակազմերի անդամների իրազեկվածության մակարդակը և արգելավայրերի կառավարման գործընթացներին ՏԻՄ-երի մասնակցության հնարավորությունները.
3. Հարցումների միջոցով բացահայտել արգելավայրերի վերաբերյալ համայնքների մանկավարժական կոլեկտիվների անդամների իրազեկվածության մակարդակը.
4. Հարցումների միջոցով բացահայտել արգելավայրերի վերաբերյալ համայնքների այլ բնակիչների իրազեկվածության մակարդակը.
5. Բացահայտել համայնքներում արգելավայրերի վերաբերյալ տեղեկացվածության ցածր, բավարար կամ բարձր մակարդակների պատճառները:

ԲԱԺԻՆ 1

Արգելավայրերի վերաբերյալ համայնքների իրազեկվածության մակարդակի և կառավարման գործընթացներին ՏԻՄ-երի մասնակցության պատրաստակամության ուսումնասիրության մեթոդները

1.1 Համայնքների ընտրությունը

Համաձայն <<Հայաստանի պահպանվող տարածքների զարգացում>> ՄԱԶԾ/ԳԷՀ միջին ծավալի ծրագրի՝ համայնքների ընտրությունն իրականացվել է հետևյալ երկու սկզբունքներով.

- գործող արգելավայրերին հարակից համայնքներ (ըստ Ծրագրի՝ 9 համայնքներ).
- Ծրագրի տարածքներում (ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզեր) <<Զանգեզուր>> (գործող), <<Գնիշիկ>> և <<Խուստուփ>> ստեղծվող արգելավայրերին հարակից համայնքներ (ըստ Ծրագրի՝ 7 համայնքներ):

Գործող արգելավայրերին հարակից համայնքների ընտրության դեպքում որպես չափորոշիչներ հաշվի են առնվել՝ մարզերում առկա արգելավայրերի քանակը, համայնքների տեղադրությունը (արգելավայրերին մոտ կամ հեռու գտնվելը), արգելավայրերի վրա բացասական ազդեցության հնարավորությունները: Համաձայն նշված չափորոշիչների ընտրված համայնքները և համապատասխան արգելավայրերը ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Գործող արգելավայրերին հարակից համայնքները

Մարզ	Համայնք	Արգելավայր
Վայոց Ձոր	Հեր-Հեր	<<Հեր-Հերի նոսրանտառային>>
Արարատ	Գոռավան	<<Գոռավանի ավազուտներ>>
	Փոքր Վեդի	<<Խոր վիրապ>>
Արմավիր	Արազափ	<<Որդան կարմիր>>
Կոտայք	Մեղրաձոր	<<Արզական-Մեղրաձոր>>, <<Հանքավանի ջրաբանական>>, <<Բանքսի սոճու>>
Լոռի	Մարգահովիտ	<<Կովկասյան մրտավարդենու>>
	Գյուլագարակ	<<Գյուլագարակի սոճուտ>>
Տավուշ	Գանձաքար	<<Գանձաքարի>>
	Խաշթառակ	<<Իջևանի>>, <<Արջատխլենու>>

Ծրագրի տարածքներում համայնքների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով <<Զանգեզուր>> (գործող), <<Գնիշիկ>> և <<Խուստուփ>> ստեղծվող արգելավայրերին առավել մոտ գտնվող համայնքների առկայությունը: Համաձայն նշված չափորոշիչի ընտրված համայնքները և համապատասխան արգելավայրերը ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Ծրագրի տարածքում ընտրված համայնքները

Մարզ	Համայնք	Արգելավայր
Սյունիք	Քաջարան, Գեղի	<<Զանգեզուր>>
	Ծավ	<<Խուստուփ>>
Վայոց Ձոր	Ագարակաձոր Գնիշիկ Արենի Խաչիկ	<<Գնիշիկ>>

1.2 Համայնքներում հարցումների կազմակերպումը

Արգելավայրերի վերաբերյալ համայնքների իրազեկվածության մակարդակի և կառավարման գործընթացներին ՏԻՄ-երի մասնակցության պատրաստակամության ուսումնասիրությունները պատշաճ կազմակերպելու և իրականացնելու նպատակով մշակվել են երեք տիպի հարցաթերթիկներ: Առաջին տիպի հարցաթերթիկի (Հավելված 1) բովանդակությունն ընդգրկում է արգելավայրերին հարակից համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բացահայտմանը վերաբերող հարցեր: Հարցաթերթիկի 2-րդ տիպը (Հավելված 2) վերաբերվում է Հայաստանում գործող արգելավայրերի վերաբերյալ համայնքների իրազեկվածության մակարդակի գնահատմանը: Այս հարցաթերթիկում ընդգրկված հարցերը բաժանվում են 6 թեմատիկ խմբերի.

ա/ արգելավայրերի վերաբերյալ բնակչության տեղեկացվածության մակարդակի բացահայտում.

բ/ համայնքի բնակչության սոցիալական վիճակի վրա արգելավայրի ազդեցության պարզաբանում.

գ/ բնապահպանական օրենքների վերաբերյալ բնակչության գիտելիքների մակարդակի բացահայտում.

դ/ բնապահպանության ոլորտում բնակչության գիտելիքների և իրազեկվածության մակարդակի բարձրացման դերի բացահայտում.

ե/ բնապահպանության ոլորտում առավել գործուն դեր ունեցող կառույցների բացահայտում.

զ/ արգելավայրերի արդյունավետ կառավարման գործում համայնքի մասնակցության հնարավորությունների բացահայտում:

Հարցաթերթիկի 3-րդ տիպը (Հավելված 3) վերաբերվում է ՀՀ Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում նոր ստեղծվող պետական արգելավայրերի վերաբերյալ համայնքների իրազեկության մակարդակի գնահատմանը, որում ընդգրկված հարցերը բաժանվում են հետևյալ 6 թեմատիկ խմբերի.

ա/ նոր ստեղծվող արգելավայրերի և դրանց արժեքների վերաբերյալ ազգաբնակչության տեղեկացվածության մակարդակի բացահայտում.

բ/ համայնքի բնակչության սոցիալական վիճակի վրա արգելավայրի ազդեցության հնարավորությունների պարզաբանում.

գ/ բնապահպանական օրենքների վերաբերյալ բնակչության գիտելիքների բացահայտում.

դ/ բնապահպանության ոլորտում առավել գործուն դեր ունեցող կառույցների բացահայտում.

ե/ բնապահպանության ոլորտում բնակչության գիտելիքների և իրազեկվածության մակարդակի բարձրացման դերի բացահայտում.

զ/ արգելավայրերի արդյունավետ կառավարման գործում համայնքի մասնակցության հնարավորությունների բացահայտում:

Համայնքի կարողությունների բացահայտման նպատակով կազմված հարցաթերթիկը լրացվել է գյուղապետարանի համապատասխան մասնագետների (հաշվապահ, աշխատակազմի քարտուղար) հետ հարցումների միջոցով:

Համայնքներում հարցումներն անց են կացվել 3 թիրախային խմբերի՝ գյուղապետարանի աշխատակազմի, դպրոցի մանկավարժների և համայնքի այլ (մենատնտես, անհատ ձեռներեց, ուսանող, թոշակառու, գործազուրկ) բնակիչների շրջանում: Հարցումներն իրականացվել են անհատական մոտեցման սկզբունքով՝ պատասխաններն ամրագրելով հարցաթերթիկում: Հարցումների քանակական տվյալները և ժամանակահատվածները ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Հարցումների քանակական տվյալները և ժամանակահատվածները

Մարզ	Համայնք	Հարցվողների թիվը	Հարցման ամսաթիվը
Արարատ	Գոռավան	32	16.11.2010թ.
	Փոքր Վեդի	40	16.11.2010թ.
Արմավիր	Արազափ	30	18.11.2010թ.
Կոտայք	Մեղրաձոր	30	30.11.2010թ.
Լոռի	Մարգահովիտ	41	04.11.2010թ.
	Գյուլագարակ	30	02.11.2010թ.
Տավուշ	Գանձաքար	40	10.11.2010թ.
	Խաշթառակ	31	09.11.2010թ.
Վայոց Ձոր	Հեր-Հեր	20	27.10.2010թ.
	Ագարակաձոր	30	26.10.2010թ.
	Գնիշիկ	6	26.10.2010թ.
	Արենի	30	27.10.2010թ.
	Խաչիկ	24	28.10.2010թ.
Սյունիք	Քաջարան,	40	22.10.2010թ.
	Գեղի	20	20.10.2010թ.
	Ծավ	22	19.10.2010թ.
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	466	

Լրացված հարցաթերթիկները պահվում են ՀՀ բնապահպանության նախարարության <<Բնապահպանական ծրագրերի կենտրոն>> ՊՈԱԿ-ում:

ԲԱԺԻՆ 2

Արգելավայրերին հարակից համայնքների կարողությունները

Ըստ բնակչության թվաքանակի ուսումնասիրված համայնքները բաժանվում են 3 խմբի.

1. փոքր համայնքներ (բնակչությունը մինչև 1000 մարդ)՝ Գեղի, Գնիշիկ և Ծավ.
2. միջին մեծության՝(բնակչությունը 1000-3000 մարդ)՝ Հեր-Հեր, Ագարակաձոր, Արենի, Խաչիկ, Խաշթառակ, Գյուլագարակ, Արազափ, Գոռավան և Մեղրաձոր.
2. խոշոր (բնակչությունը 3000 և ավելի)՝ Քաջարան, Փոքր Վեդի, Գանձաքար և Մարգահովիտ:

Բոլոր համայնքներում բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ, բացի Քաջարանից, որը վարելահողեր և խոտհարքներ չունի: Վարելահողերը, պտղատու այգիները և խոտհարքները սեփականաշնորհված են, իսկ արոտները մնում են համայնքային սեփականություն: Յուրաքանչյուր շնչին ընկնում է 0,1-1,2 հա վարելահող: Հիմնականում մշակվում են հացահատիկային, բանջարաբոստանային մշակաբույսեր և կարտոֆիլ: Բնակիչները մեծ մասամբ օգտվում են համայնքամերձ արոտներից, որոնք գերարածեցված են և աստիճանաբար կորցնում են տնտեսական արժեքավոր հատկանիշները: Չի կիրառվում ցանքաշրջանառություն և ագրոկանոններով նախատեսված օրգանական և հանքային պարարտանյութերով պարարտացում:

Համայնքներում կատարված ուսումնասիրությունների արդյունքներից ակնհայտ է դառնում հայտնաբերված հետևյալ բացերի նույնականությունը, որոնք էական խոչնդոտող նշանակություն կարող են ունենալ արգելավայրերի կառավարման մասնակցության գործընթացում.

1. *Չնայած համայնքները լրիվ ծավալով ստացել են պետական դոտացիան, սակայն սեփական հավաքագրումները 2009թ-ին հիմնականում թերակատարվել են: 2010թ-ին արձանագրվել է որոշակի առաջխաղացում՝ մասնավորապես ՀՀ Վայոց Ձորի մարզի համայնքներում բյուջեի հավաքագրումները կատարվել են ամբողջությամբ, որը կայունության երաշխիքներ է տալիս:*
2. *Հիմնականում գյուղապետարաններում և մասնակիորեն Քաջարանի քաղաքապետարանում բնապահպանության ոլորտի մասնագիտական համապատասխան ներուժի անբավարար առկայությունը.*
3. *Ազգաբնակչության կախվածությունը համայնքամերձ տարածքների բնական պաշարներից.*
4. *Սպասարկման և այլ ծառայությունների մատուցման բնագավառներում գործող համայնքային կազմակերպությունների անբավարար առկայությունը.*
5. *Արգելավայրերի պահպանության և օգտագործման հարցերում համայնքների և համապատասխան պետական կազմակերպությունների միջև թույլ համագործակցությունը:*

<u>Առաջարկվող քայլերը.</u> Համայնքների կարողությունները որոշիչ դեր են խաղում ցանկացած խնդրի լուծման և զարգացումն ապահովելու գործում: Այդ տեսակետից գլխավոր դերակատարումն ունեն ՏԻՄ-երը, որոնց գործողությունները նախ պետք է նպատակաուղղված լինեն օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասությունների լիարժեք իրականացմանը: Վերջիններիս շրջանակներում անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

- պարզել սեփական հավաքագրումների թերակատարման պատճառները և միջոցներ ձեռք առնել դրանք վերացնելու համար.
- ակտիվ գործունեություն ծավալել համայնքային կազմակերպությունների ստեղծման ուղղությամբ, որոնք նպատակաուղղված կլինեն ոչ միայն տնտեսական գործունեությամբ զբաղվելու, այլև մատուցելու սպասարկման ծառայություններ, այդ թվում՝ զբոսաշրջիկների ուղեկցողներ դեպի համայնքի բնության տեսարժան վայրեր և արգելավայրեր: Նման գործունեությունը ոչ միայն կնպաստի համայնքներում մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործմանն ու զարգացմանը, այլև՝ համայնքային բյուջեի համալրմանը.
- մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործմամբ՝ նախաձեռնել և խրախուսել համայնքի զարգացմանը նպաստող անհրաժեշտ գործողությունների իրականացման ծրագրերի մշակմանը, այդ թվում՝ բնապահպանական թեմաներով, և համագործակցելով համապատասխան պետական ու տարածքային կառավարման մարմինների հետ լուծել դրանց իրականացման համար ֆինանսավորման հարցերը.
- սերտ համագործակցություն հաստատել համայնքի վարչական սահմաններում գործող պետական կազմակերպությունների, այդ թվում՝ պահպանվող տարածքների, համայնքում կամ մարզում գործող հասարակական կազմակերպությունների հետ.
- կազմակերպել հասարակական միջոցառումներ՝ նպատակաուղղված համայնքի բնության տեսարժան վայրերի, այդ թվում՝ բնության հուշարձանների մաքրությանն ու անաղարտությանը, ճանաչողությանը, գիտելիքների հարստացմանը, համայնքի արժեքների նկատմամբ սեփականատիրության զգացողության ամրապնդմանը:

ԲԱԺԻՆ 3

Գործող արգելավայրերին հարակից համայնքների բնակչության իրազեկվածության մակարդակը

Գործող արգելավայրերին հարակից համայնքների բնակչության իրազեկվածության մակարդակի բացահայտման նպատակով իրականացված հարցումներում ընդգրկված 294 մասնակիցների ժողովրդագրական տվյալները բերված են Աղյուսակ 4-ում: Հարկ է նշել, որ հարցումների ընթացքում սեռերի, կրթական ցենզի և տարիքային խմբի հատուկ ընտրություն չի կատարվել: Դրանց վերաբերյալ տվյալները ստացվել են լրացված հարցաթերթիկների (Հավելված 2) վերլուծություն արդյունքում:

Աղյուսակ 4

Հարցման մասնակիցների ժողովրդագրական տվյալները

<table>
<tr><th colspan="6">Սեռը</th></tr>
<tr><th colspan="3">Արական</th><th colspan="3">Իգական</th></tr>
<tr><td colspan="3">61,9 %</td><td colspan="3">38,1 %</td></tr>
<tr><th colspan="6">Կրթական ցենզը</th></tr>
<tr><th colspan="2">Բարձրագույն</th><th colspan="2">Միջնակարգ մասնագիտական</th><th colspan="2">Միջնակարգ</th></tr>
<tr><td colspan="2">41,1 %</td><td colspan="2">42,2 %</td><td colspan="2">16,7 %</td></tr>
<tr><th colspan="6">Տարիքային խումբը</th></tr>
<tr><th colspan="2">Մինչև 25 տարեկան</th><th colspan="2">26-40 տարեկան</th><th colspan="2">41-55 տարեկան</th><th>56 և ավելի</th></tr>
<tr><td colspan="2">11,5 %</td><td colspan="2">30,0 %</td><td colspan="2">40,5 %</td><td>18,0 %</td></tr>
<tr><th colspan="6">Սոցիալական խումբը</th></tr>
<tr><th>Ծառայող</th><th>Մենատնտես</th><th>ՈՒսանող</th><th>Թոշակառու</th><th>Անհատ ձեռներեց</th><th>Գործազուրկ</th></tr>
<tr><td>40,6 %</td><td>33,5 %</td><td>8,9 %</td><td>9,6 %</td><td>5,8 %</td><td>1,6 %</td></tr>
<tr><th colspan="6">Թիրախային խմբեր</th></tr>
<tr><th colspan="2">Գյուղապետարանի աշխատակազմ</th><th colspan="2">Մանկավարժական կոլեկտիվի անդամներ</th><th colspan="2">Համայնքի այլ բնակիչներ</th></tr>
<tr><td colspan="2">18,4%</td><td colspan="2">21,8%</td><td colspan="2">59,8%</td></tr>
</table>

3.1. Արգելավայրերի առկայության վերաբերյալ հարցվողների տեղեկացվածությունը

Իրականացված հարցումների արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ մասնակիցների 84,4 %-ը տեղյակ է արգելավայրերի ստեղծման նպատակների մասին: Ըստ համայնքների՝ այս ցուցանիշը տատանվում է 70,0-93,3 %-ի սահմաններում: Ընդ որում՝ առավել տեղեկացված են Գյուլագարակ, Մարգահովիտ, Փոքր Վեդի և Խաշթառակ համայնքների հարցման մասնակիցները, որտեղ դրական պատասխանները կազմում են համապատասխանաբար 93,3 %, 92,7 %, 92,5 % և 90,3 %:

Թիրախային խմբերի համեմատությունը ցույց է տալիս, որ գյուղապետարանների աշխատակազմի անդամների 87,0 %-ը, մանկավարժական կոլեկտիվների անդամների 90,6 %-ը և համայնքների այլ բնակիչների 81,3 %-ը տեղյակ է արգելավայրերի ստեղծման նպատակների մասին:

Հարցման մասնակիցների 59,5 %-ը տեղյակ է, որ իրենց համայնքին հարակից գործում է պետական արգելավայր: Այս առումով առավել տեղեկացված են Փոքր Վեդի, Արազափ, Գոռավան և Հեր-Հեր համայնքները, որտեղ դրական պատասխանները կազմում են 60,0-100,0 %: Այս հարցի վերաբերյալ իրազեկության մակարդակը համեմատաբար ցածր է Խաշթառակ, Մարգահովիտ և Գանձաքար համայնքների հարցվողների շրջանում՝ համապատասխանաբար 16,1%, 24,4% և 40,0 %: Թիրախային խմբերից առավել տեղեկացված են գյուղապետարանների աշխատակազմերի (81,5 %) և մանկավարժական կոլեկտիվների (57,8 %) աշխատակիցները: Բնակչության այլ խավերի միայն 53,4 % է տեղյակ, որ իրենց համայնքին հարակից գործում է պետական արգելավայր:

Համայնքներին հարակից արգելավայրերի անվան մասին համեմատաբար լավ են տեղեկացված գյուղապետարանների աշխատակիցները (84,7 %): Արգելավայրերի անվանումները գիտեն մանկավարժների 33,9 %-ը, իսկ այլ բնակիչների՝ 25,8 %-ը: Մեղրաձոր, Արազափ, Գոռավան և Փոքր Վեդի համայնքներում հարցման մասնակիցների 43,3-90,0 %-ը տեղյակ է, թե ինչպես է կոչվում համայնքին հարակից արգելավայրը: Մյուս համայնքների մասնակիցները չեն պատասխանել արգելավայրի անվանը վերաբերվող հարցին:

Մասնակիցների 52,2 %-ի կարծիքով իրենք տեղյակ են, թե ինչ արժեքների հիման վրա է ստեղծվել պետական արգելավայրը: Սակայն հաջորդ պարզաբանող հարցին, արգելավայրում պահպանվող արժեքների առանձնահատկությունների վերաբերյալ, հիմնականում տրվել են ընդհանրական պատասխաններ: Որպես կանոն նշվում է բուսական և կենդանական աշխարհի պահպանությունը: Միայն Գոռավան, Փոքր Վեդի և Արազափ համայնքների հարցվողները նշել են յուրահատուկ այն արժեքները, որոնց պահպանության համար ստեղծվել են իրենց համայնքներին հարակից արգելավայրերը: Հարցումների մասնակիցներից առավել տեղեկացված են գյուղապետարանների աշխատակիցները, որոնց 68,5 %-ը տեղյակ է այն արժեքներին, որոնց պահպանության նպատակով ստեղծվել են արգելավայրերը: Հաջորդ, համեմատաբար տեղեկացված, խումբը մանկավարժներն են (50,0 %), իսկ այլ բնակիչների միայն 47,7 % -ն է տեղյակ, թե ինչ արժեքների հիման վրա են ստեղծվել արգելավայրերը: Տեղեկացվածության մակարդակը համեմատաբար ցածր է Մարգահովիտ և Խաշթառակ համայնքներում, որտեղ հարցվողների միայն 17,1 և 19,4 %-ը նշել են, որ արգելավայրը ստեղծվել է բուսական և կենդանական աշխարհի պահպանության նպատակով՝ առանց հիշատակելու կոնկրետ արժեքները:

3.2 Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա արգելավայրի ազդեցությունը

Սույն հարցման նպատակն է եղել պարզաբանել հետևյալը.

ա/ արգելավայրի ազդեցությունը համայնքում գործազրկության կրճատման վրա,

բ/ արգելավայրի ազդեցությունը բնապահպանական ծրագրերի ստացման և իրականացման հնարավորությունների վրա,

գ/ արգելավայրից օգտվելու (բույսերի և վառելափայտի հավաք, արածեցում, խոտհունձ, մեղվապահություն) հնարավորությունները,

դ/ արգելավայրի ազդեցությունը համայնքում զբոսաշրջության զարգացման վրա:

Հարցման մասնակիցների գերակշիռ մասը (83,0 %) գտնում է, որ արգելավայրերի առկայությունը չի լուծում համայնքներում զբաղվածության խնդիրը: Այս հարցի վերաբերյալ այլ է կարծիքը Մեղրաձոր և Հեր-Հեր համայնքներում, որտեղ հարցվողների 53,3 և 40,0 %-ը հավաստում են, որ հարակից արգելավայրերում աշխատում են համագյուղացիներ: Դա հավանաբար պայմանավորված է նրանով, որ Մեղրաձոր և Հեր-Հեր համայնքներին հարակից արգելավայրերն իրենց բնույթով անտառային են և գործում են համապատասխան անտառային տնտեսությունների կազմում, որտեղ և աշխատում են համայնքների որոշ բնակիչներ:

Հարցման մասնակիցները հիմնականում միակարծիք են, որ արգելավայրերը չեն նպաստում համայնքային բնապահպանական ծրագրերի ստացմանը և իրականացմանը: Այս տեսակետը արտահայտել են հարցվողների 82,7 %-ը: Բացառություն են կազմում Փոքր Վեդի, Գյուլագարակ և Մեղրաձոր համայնքները, որտեղ հարցվածների համապատասխանաբար 30,0%, 33,3% և 66,7%-ի կարծիքով արգելավայրերի առկայությունը նպաստում է համայնքային բնապահպանական ծրագրերի ստացմանը և իրականացմանը:

Ինչ վերաբերվում է արգելավայրերի տարածքների տարբեր նպատակներով օգտագործմանը, ապա Մեղրաձոր, Գյուլագարակ և Գանձաքար համայնքներում հարցման մասնակիցների մեծամասնությունը նշում է, որ բնակիչներն արգելավայրերի տարածքից հավաքում են սննդում օգտագործվող բուսատեսակներ և սնկեր, իսկ Գոռավանից և Արազափից հարցվողները բացառում են այդ հնարավորությունը: Գյուլագարակ, Մարգահովիտ, Խաշթառակ և Փոքր Վեդի համայնքներում հարցվողները նշում են, որ արգելավայրերի տարածքում չի իրականացվում արածեցում և խոտհունձ, այն դեպքում, երբ Մեղրաձոր համայնքում հարցվածների 43,3 %-ը նշում է, որ արգելավայրի տարածքում իրականացվում է արածեցում, իսկ 73,3 %-ը՝ նաև խոտհունձ: Մեղրաձոր համայնքում հարցվածների 60,0 %-ի, Գանձաքար համայնքում՝ 10,0%-ի և Հեր-Հեր համայնքում 10,0%-ի հավաստմամբ արգելավայրերի տարածքից իրականացվում է վառելափայտի հավաք: Մեղրաձոր, Գանձաքար և Գյուլագարակ համայնքներում հարցման մասնակիցների 20,0-73,1 %-ի վկայությամբ տարածքում բնակիչները զբաղվում են մեղվապահությամբ: Այս հարցին բացասական պատասխան են տվել Մարգահովիտ, Արազափ և Փոքր Վեդի համայնքներում հարցման մասնակիցները:

Արգելավայրերի տարածքների տարբեր նպատակներով օգտագործման վերաբերյալ հարցվողների կողմից տարաբնույթ պատասխանների առկայությունը հավանաբար պայմանավորված է ինչպես արգելավայրերի բնույթով, այնպես էլ արգելավայրերի պահպանության անբավարար մակարդակով և դրանց սահմանների մասին հարցման մասնակիցների վատ տեղեկացվածությամբ:

Արգելավայրերի սահմանափակող ազդեցության վերաբերյալ հարցման մասնակիցների միայն 36,1 %-ն է գտնում, որ արգելավայրն ունի սահմանափակող ազդեցություն: Ընդ որում՝ որպես սահմանափակող ազդեցություն հիմնականում նշվում է արածեցման, խոտհունձի և վառելափայտի հավաքի արգելումը: Հարցվողների ավելի քան 63,0%-ի կարծիքով արգելավայրը չի սահմանափակում բնակիչների գործունեությունը արգելավայրերի տարածքներում:

Արգելավայրերում իրականացվող զբոսաշրջության և համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի վրա թողած ազդեցության վերաբերյալ հարցումների արդյունքները վկայում են, որ հարցվողների 84,0 %-ի կարծիքով արգելավայրերում զբոսաշրջություն չի իրականացվում: Այս փաստը վկայում են նաև գյուղապետարանների աշխատակազմի 74,1 %-ը, մանկավարժական կոլեկտիվի 84,4 %-ը և համայնքների այլ բնակիչների 86,9 %-ը: Հարցման մասնակիցների մեծամասնությունը (71,8 %) գտնում է, որ արգելավայրերի առկայությունը չի նպաստում զբոսաշրջիկների հոսքին դեպի համայնքներ, 79,6%-ը նշում են, որ արգելավայր այցելողները չեն օգտվում համայնքի ենթակառուցվածքներից, իսկ 85,0 %-ը վկայում են, որ արգելավայր այցելողները չեն գնում տեղական ապրանքատեսակներ: Որոշակիորեն տարբերվում են Մեղրաձոր և Փոքր Վեդի համայնքներում հարցվողների պատասխանները: Այսպես՝ Մեղրաձոր համայնքում հարցման մասնակիցների 46,7 %-ը գտնում է, որ արգելավայրում իրականացվում է զբոսաշրջություն, 56,7 %-ի կարծիքով արգելավայրը նպաստում է զբոսաշրջիկների հոսքին դեպի համայնք, իսկ 60,0 %-ը նշում է, որ զբոսաշրջիկները օգտվում են համայնքի ենթակառուցվածքներից: Փոքր Վեդիի հարցվածների 42,5 %-ի կարծիքով արգելավայրում իրականացվում է զբոսաշրջություն, 85,0%-ի կարծիքով արգելավայրը նպաստում է զբոսաշրջիկների հոսքին դեպի համայնք, իսկ 60,0 %-ի կարծիքով այցելուները օգտվում են համայնքի ենթակառուցվածքներից:

3.3 Բնապահպանական օրենքների վերաբերյալ ազգաբնակչության գիտելիքների մակարդակը

Այս խմբի հարցերի պատասխանների վերլուծությունից հստակ է, որ հարցման մասնակիցների մեծ մասը ծանոթ չէ բնապահպանության ոլորտը կարգավորող օրենսդրությունից: Հարցվողների միայն 8,5 %-ն է նշել, որ տեղեկացված է բնապահպանական օրենքների վերաբերյալ: Մասամբ ծանոթ են ոլորտը կարգավորող օրենքներին հարցման մասնակիցների 68,4 %-ը: Թիրախային խմբերից համեմատաբար լավ են տեղեկացված գյուղապետարանների աշխատակազմի անդամները, թեև այս դեպքում դրական պատասխանները կազմել են միջինը 18,5 %: Բացառություն է կազմում միայն Փոքր Վեդի համայնքի գյուղապետարանի աշխատակազմը, որի անդամների 57,1

%-ը տեղյակ է բնապահպանական օրենքներին: Հարցմանը մասնակցած մանկավարժներից միայն Մեղրաձոր, Փոքր Վեդի և Արազափ համայնքներում են ծանոթ բնապահպանական օրենքներին՝ համապատասխանաբար 8,3 %, 12,5 % և 33,3 %: Մյուս համայնքների մանկավարժները այս հարցին տվել են բացասական պատասխան: Մասամբ տեղեկացված են հարցին դրական են պատասխանել մանկավարժների 65,6 %-ը: Գյուլագարակ, Հեր Հեր, Մարգահովիտ և Խաշթառակ համայնքներում հարցմանը մասնակցած այլ խմբերի բնակիչները ծանոթ չեն բնապահպանական օրենքներին, իսկ Մեղրաձոր, Արազափ, Գոռավան, Փոքր Վեդի և Գանձաքար համայնքներում տեղեկացվածները կազմում են մասնակիցների 4,0-9,5 %-ը: Հարցվածների այս խմբում մասամբ ծանոթ են բնապահպանական օրենքներին միայն 26,1 %-ը: Հարկ է նշել, որ բնապահպանական օրենքներին ամբողջովին կամ մասամբ ծանոթ հարցվողները հիմնականում չեն կարողացել նշել ոլորտը կարգավորող օրենքներից որևէ մեկը:

Ըստ էության վիճակը նույնն է տույժ և տուգանքներին վերաբերող գիտելիքների հարցում: Մասնակիցների ընդհանուր թվի 17,7 %-ը գտնում է, որ տեղյակ չէ այն տույժ և տուգանքներից, որոնք սահմանված են բնապահպանական խախտումների համար: Հարցվողների 9,2 %-ը գտնում է, որ այս բնագավառում ունի բավարար գիտելիքներ, իսկ 73,1 %-ի կարծիքով՝ մասամբ տեղեկացված են տույժ և տուգանքների մասին: Թիրախային խմբերից համեմատաբար բարձր է գյուղապետարանների աշխատակազմերի անդամների տեղեկացվածությունը:

Բնության արժեքների պահպանության գործում իրազեկվածության և գիտելիքների մակարդակի բարձրացման կարևորության վերաբերյալ հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ մասնակիցներն ուղիղ կապ են տեսնում գիտելիքների և իրազեկության մակարդակի բարձրացման և բնության արժեքների պահպանության միջև: Հարցվողների 40,1 %-ը գտնում է որ, իրազեկության և գիտելիքների մակարդակի բարձրացումը մեծ չափով կնպաստի բուսական և կենդանական աշխարհի պահպանության, պաշտպանության և վերարտադրության աշխատանքների բարելավմանը, իսկ 46,3%-ը՝ որոշ չափով: Հարցման մասնակիցների միայն 12,9 %-ն է գտնում, որ գիտելիքների և իրազեկության մակարդակի բարձրացումը չի նպաստի բնության արժեքների պահպանության աշխատանքների բարելավմանը:

3.4 Բնապահպանության ոլորտում առավել կարևոր դեր ունեցող կառույցների վերաբերյալ պատկերացումները

Բնապահպանության ոլորտում առավել կարևոր դեր ունեցող կառույցների վերաբերյալ պատկերացումների բացահայտման նպատակով տրված հարցին, թե ովքե՞ր առավել վճռական դեր կարող են ունենալ բնապահպանության ոլորտում չարաշահումները կանխելու գործում, ստացվել են հետևյալ պատասխանները, ըստ որում հարցվողը կարող էր նշել մեկից ավելի տարբերակներ.

ա/ համայնքի բնակչությունը – 81,3 %,

բ/ մարզպետարանը – 9,5 %,

գ/ գյուղապետարանը – 73,8 %,

դ/ բնապահպանական տեսչությունը – 15,3 %,
ե/ հասարակական կազմակերպությունները – 17,0 %,
զ/ իրավապահ մարմինները – 24,1 %:

Հարցումների արդյունքները վկայում են, որ մասնակիցները հիմնականում վստահում են բնակիչների կարողություններին և ՏԻՄ-երին: Մտահոգիչ է այն փաստը, որ պատասխանողների միայն 17,0 %-ն է վստահում հասարակական կազմակերպություններին, 15,3 %-ը՝ բնապահպանական տեսչությանը և 24,1 %-ը իրավապահ մարմիններին:

3.5 Արգելավայրերի արդյունավետ կառավարման գործընթացներում համայնքների մասնակցության հնարավորությունները

Այն հարցին, թե ինչպե՞ս եք պատկերացնում համայնքի և արգելավայրի փոխադարձ արդյունավետ համագործակցությունը, հարցման մասնակիցների 77,2 %-ը գտնում են, որ համայնքը արգելավայրի հետ կարող է կնքել փոխադարձ համագործակցության պայմանագիր, որտեղ հստակ կնշվեն երկու կողմերի պարտավորությունները: Հարցվողների միայն 17,0 %-ն է գտնում, որ համայնքի և արգելավայրի միջև համագործակցության եզրեր հնարավոր չէ գտնել:

Հետաքրքիր կարծիքներ են արձանագրվել արգելավայրի կառավարմանը համայնքի մասնակցության նախընտրելի ձևերի վերաբերյալ: Ընդ որում՝ հարցվողների մի մասը ընտրել են հարցերի մեկից ավելի տարբերակներ: Արդյունքում՝ հարցման մասնակիցները գտնում են, որ համայնքը կարող է մասնակցել արգելավայրի կառավարմանը հետևյալ տարբերակներով.

ա/ արգելավայրի համատեղ կառավարում գյուղապետարանի և արգելավայրը կառավարող կազմակերպության կողմից – 78,2 %.
բ/ արգելավայրի կառավարում գյուղապետարանի կողմից – 20,1 %.
գ/ արգելավայրի կառավարում հարակից համայնքների կողմից ստեղծված միավորման կողմից – 29,9 %.
դ/ մարզպետարանի կողմից - 4,1 %:

3.6 Արդյունքների ամփոփում

Ամփոփելով գործող արգելավայրերին հարակից համայնքներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

1. արգելավայրերի ստեղծման նպատակների և դրանցում պահպանվող արժեքների վերաբերյալ ցածր է բնակչության տեղեկացվածության մակարդակը.
2. արգելավայրերը էական դեր չունեն բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման և զբոսաշրջության զարգացման գործում.

3. արգելավայրերին հարակից համայնքներում անբավարար են բնակչության գիտելիքները բնապահպանական օրենքների և բնապահպանական խախտումների համար սահմանված տույժերի ու տուգանքների վերաբերյալ.
4. բնակիչները կարևորում են գիտելիքների դերը բնապահպանության ոլորտում աշխատանքների բարելավման գործում.
5. բնապահպանության ոլորտում չարաշահումների կանխման գործում հարցման մասնակիցները առավել վստահում են բնակիչների ներուժին և ՏԻՄ-երին.
6. մասնակիցների մեծամասնության կարծիքով համայնքը կարող է արդյունավետ համագործակցել արգելավարի հետ, ինչպես նաև մասնակցել կառավարման գործընթացին.
7. արգելավայրերի կառավարմանը համայնքի մասնակցության նախընտրելի տարբերակ է համարվում համատեղ կառավարումը գյուղապետարանի և արգելավայրը կառավարող ՊՈԱԿ-ի կողմից.
8. համայնքի կարողությունների ներկա վիճակը (բնապահպանության ոլորտի մասնագիտական կադրերի ցածր ապահովվածություն, բնակիչների սոցիալ-տնտեսական ծանր վիճակ, գյուղատնտեսության վարման ցածր մակարդակ) կարող է հիմնական խոչնդոտող գործոնը հանդիսանալ արգելավայրերի կառավարումը ստանձնելու և արդյունավետ կառավարելու գործընթացում:

<u>Առաջարկվող քայլերը.</u> Գործող արգելավայրերի վերաբերյալ բնակչության տեղեկացվածության և գիտելիքների բարձրացման ուղղությամբ միջոցառումները պետք է կազմակերպվեն ՀՀ բնապահպանության նախարարության, տարածքային կառավարման մարմինների, ՏԻՄ-երի, գիտական և կրթական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի սերտ համագործակցության պայմաններում: Այս գործընթացի իրականացումը պետք է հիմնված լինի հստակ մշակված, փոխհամաձայնեցված և կայուն ֆինանսավորմամբ ծրագրի վրա: Վերջինս պետք է ընդգրկի այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝

- բնապահպանական օրենսդրության, այդ թվում՝ Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների, բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը,
- գործող արգելավայրերի արժեքների մասին գիտելիքների մատուցումը, այդ թվում՝ արգելավայրերի նշանակության, բնույթի, տերմինների և բառակապակցությունների մատչելի բացատրությունները.
- արգելավայրերի պահպանության, օգտագործման և էկոզբոսաշրջության զարգացման գործընթացներում համայնքների մասնակցության անհրաժեշտությունը.
- հաղորդակցության, տեղեկատվության տարածման և արգելավայրերի կառավարման գործընթացներում բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ և արդյունավետ մասնակցության անհրաժեշտությունը.
- արգելավայրերի համառոտ նկարագրերի, լուսանկարների և քարտեզների տպագրությամբ բազմալեզու տեղեկատվական նյութերի պատրաստում, հրատարակում, տարածում և այլն:

ԲԱԺԻՆ 4
Նոր ստեղծվող արգելավայրերին հարակից համայնքների բնակչության իրազեկվածության մակարդակը

ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում նոր ստեղծվող արգելավայրերին հարակից համայնքների բնակչության իրազեկվածության մակարդակի բացահայտման նպատակով իրականացված հարցումներում ընդգրկված 172 մասնակիցների ժողովրդագրական տվյալները բերված են Աղյուսակ 5-ում: Հարկ է նշել, որ հարցումների ընթացքում սեռերի, կրթական ցենզի և տարիքային խմբի հատուկ ընտրություն չի կատարվել: Դրանց վերաբերյալ տվյալները ստացվել են լրացված հարցաթերթիկների (Հավելված 3) վերլուծություն արդյունքում:

Աղյուսակ 5

Հարցման մասնակիցների ժողովրդագրական տվյալները

Սեռը					
Արական			Իգական		
62,2 %			37,8 %		
Կրթական ցենզը					
Բարձրագույն		Միջնակարգ մասնագիտական		Միջնակարգ	
35,5 %		37,8 %		26,7 %	
Տարիքային խումբը					
Մինչև 25 տարեկան		26-40 տարեկան	41-55 տարեկան		56 և ավելի
10,5 %		36,1 %	38,9 %		14,5 %
Սոցիալական խումբը					
Ծառայող	Մենատնտես	ՈՒսանող	Թոշակառու	Անհատ ձեռներեց	Գործազուրկ
45,3%	28,5%	7,0%	5,8%	8,7%	4,7%
Թիրախային խմբեր					
Գյուղապետարանի աշխատակազմ		Մանկավարժական կոլեկտիվի անդամներ		Համայնքի այլ բնակիչներ	
18,6%		26,7%		54,7%	

4.1. Նոր ստեղծվող արգելավայրերի վերաբերյալ ազգաբնակչության տեղեկացվածության մակարդակը

Իրականացված հարցումների արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ մասնակիցների շրջանում միջինից բարձր է (58,7%) տեղեկացվածությունը, որ համայնքների հարակից տարածքներում ստեղծվում են նոր արգելավայրեր: Ըստ համայնքների այս ցուցանիշը տատանվում է 35,0-86,7 %-ի սահմաններում: Համեմատաբար լավ են տեղեկացված ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի, Խաչիկ և

Ագարակաձոր համայնքներում (<<Գնիշիկ>> արգելավայրի վերաբերյալ), որտեղ դրական պատասխանները կազմում են համապատասխանաբար 63,3%, 66,7% և 86,7%: Իրազեկվածության մակարդակը համեմատաբար ցածր է ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան քաղաքում և Գեղի համայնքում (<<Զանգեզուր>> արգելավայրի վերաբերյալ): Նախատեսվող <<Խուստուփ>> արգելավայրի վերաբերյալ Ծավ համայնքում իրազեկվածության մակարդակը կազմում է 68.2 %:

Թիրախային խմբերի հարցումների արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ արգելավայրերի ստեղծման մասին համեմատաբար բարձր գիտելիքներ ունեն գյուղապետարանների աշխատակազմի անդամները (81,3%): Մտահոգիչ են մանկավարժների շրջանում իրականացված հարցումների արդյունքները, քանի որ հարցվողների միայն 63,0 %-ն է տեղյակ, որ համայնքներին հարակից նախատեսվում է ստեղծել նոր արգելավայրեր: Համայնքների այլ բնակիչներից այս հարցին դրական պատասխան են տվել հարցվողների 48,9 %-ը:

Հարցվողների 53,5%-ը տեղյակ է, թե ինչ նպատակով են ստեղծվում համայնքներին հարակից նոր արգելավայրերը: Այս առումով առավել տեղեկացված են (50,0-83,3%) Արենի, Գնիշիկ, Խաչիկ և Ագարակաձոր համայնքներում: Քաջարան, Գեղի և Ծավ համայնքներում հարցվողների 37,5-45,5 %-ն է տեղյակ նոր ստեղծվող արգելավայրերի նպատակների մասին: Թիրախային խմբերից առավել տեղեկացված են գյուղապետարանների աշխատակազմերի (71,8 %) և մանկավարժական կոլեկտիվների (58,7 %) անդամները: Բնակչության այլ խավերի միայն 44,7 % է տեղյակ, թե ինչ նպատակով են ստեղծվում համայնքներին հարակից արգելավայրերը:

Հարցվողների 65,7 %-ը տեղյակ է, թե ինչ արժեքների հիման վրա է ստեղծվելու նոր արգելավայրը: Այս հարցին դրական պատասխանողների ճնշող մեծամասնությունը նշում է, որ արգելավայրը ստեղծվում է բուսական և կենդանական աշխարհի պահպանության նպատակով: Սակավաթիվ են այն հարցվողները, որոնք տեղյակ են բուսական և կենդանական այն յուրահատուկ արժեքներին, որոնց պահպանությանն է նպատակաուղղված արգելավայրի ստեղծումը: Միայն Արենի, Ագարակաձոր և Խաչիկ համայնքների հարցվողներն են նշել յուրահատուկ այն արժեքները, որոնց պահպանության համար ստեղծվելու է արգելավայրը: Համեմատաբար ցածր է տեղեկացվածության մակարդակը Քաջարան քաղաքում, որտեղ հարցվողների 47,5 %-ը նշել է, որ արգելավայրը ստեղծվում է բուսական և կենդանական աշխարհի պահպանության նպատակով՝ առանց հիշատակելու կոնկրետ արժեքները: Հարցման մասնակիցների ավելի քան 32,0 %-ը չի պատասխանել այս հարցին, որը վկայում է նրանց տեղեկացվածության ցածր մակարդակի մասին: Հարցումների մասնակիցներից առավել տեղեկացված են գյուղապետարանների աշխատակիցները (84,4 %) և համայնքների այլ բնակիչները (63,8 %): Հարցմանը մասնակցած մանկավարժների միայն 58,7 %-ն է տեղյակ այն արժեքների մասին, որոնց պահպանության համար ստեղծվում են նոր արգելավայրերը:

4.2. Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա նոր ստեղծվող արգելավայրի ազդեցությունը

Սույն հարցման նպատակն է եղել պարզաբանել հետևյալը.

ա/ նոր ստեղծվող արգելավայրի տարածքում բնակչության տնտեսական գործունեության առկա ձևերը.

բ/ բնակչության կարծիքը նոր ստեղծվող արգելավայրերի միջոցով բնական պաշարների պահպանության բարելավման հնարավորությունները,

գ/ արգելավայրի հնարավոր ազդեցությունը համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա:

Հարցման մասնակիցների միայն 34,3 %-ն է նշում, որ բնակիչները օգտվում են այն տարածքներից, որտեղ նախատեսվում է ստեղծել նոր արգելավայրեր: Ընդ որում՝ եթե Ագարակաձոր, Գնիշիկ և Խաչիկ համայնքներում (<<Գնիշիկ>> արգելավայր) հարցվողների շուրջ 63,3 %-ը նշում է, որ նախատեսվող արգելավայրի տարածքը օգտագործվում է բնակչության կողմից, ապա Քաջարան, Գեղի (<<Զանգեզուր>> արգելավայր) և Ծավ (<<Խուստուփ>> արգելավայր) համայնքներում հարցման մասնակիցների շուրջ 22,0 %-ը: Վերջինս հավանաբար պայմանավորված է բարձրալեռնային գոտում արգելավայրերի տարածքների գտնվելով: Թիրախային խմբերից ստացված պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ գյուղապետարանների աշխատակազմի պատասխանողների 53,1 %-ը, մանկավարժների 23,9 %-ը և այլ բնակիչների 34,0 %-ը նույնպես վստահ են, որ բնակիչներն օգտվում են արգելավայրերի համար նախատեսված տարածքներից: Այս հարցի վերաբերյալ մանկավարժների դրական պատասխանների ցածր տոկոսը հիմնականում բացատրվում է այն հանգամանքով, որ նրանց մեծ մասը բացի մանկավարժական գործունեությունից այլ աշխատանքով (անասնապահություն, երկրագործություն և այլն) չեն զբաղվում և հիմնականում տեղեկացված չեն: Հարցման մասնակիցների (պատասխանողը կարող էր նշել մեկից ավելի տարբերակներ) 28,5 %-ը որպես տարածքի օգտագործման ձև նշել են սնկերի և բույսերի հավաքը, 18,0 %-ը՝ արածեցումը և 16,3 %-ը՝ խոտհունձը:

Նոր արգելավայրերի ստեղծմամբ բնական պաշարների պահպանության բարելավման հնարավորությունները գնահատվում են բարձր բոլոր հարցվողների շրջանում (ավելի քան 91,0 %):

Այն հարցին, թե ինչպիսի՞ դրական ազդեցություն կունենա նոր ստեղծվող արգելավայրը բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի վրա, ստացվել են հետևյալ պատասխանները.

ա/ արգելավայրերի ստեղծումը կնպաստի սննդում օգտագործվող բույսերի և սնկերի պաշարների ավելացմանը – 87,2 %.

բ/ արգելավայրերի ստեղծումը կնպաստի զբոսաշրջիկների հոսքին – 86,0 %.

գ/ զբոսաշրջիկները կօգտվեն համայնքի ենթակառուցվածքներից և տեղական ապրանքատեսակներից – 83,7 %.

դ/ արգելավայրերի առկայությունը կնպաստի համայնքային բնապահպանական ծրագրերի ստացմանը և իրականացմանը – 70,4 %:

Թիրախային խմբերի պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրված համայնքներում գյուղապետարանների աշխատակազմի և մանկավարժական կոլեկտիվի անդամների, ինչպես նաև համայնքների այլ բնակիչների գերակշիռ մեծամասնությունը (համապատասխանաբար 84,4%, 93,5% և 85,1%) գտնում են, որ նոր արգելավայրերը կնպաստեն սննդում օգտագործվող բույսերի և սնկերի պաշարների ավելացմանը:

Թիրախային բոլոր խմբերի հարցվողները ընդհանուր առմամբ միակարծիք են (84,0-93,8 %), որ նոր արգելավայրերը կնպաստեն զբոսաշրջիկների հոսքին դեպի համայնք: Ընդ որում՝ թիրախային խմբերի հարցման մասնակիցները հիմնականում վստահ են (79,8-96,9 %), որ զբոսաշրջիկները կօգտվեն համայնքների ենթակառուցվածքներից և տեղական ապրանքատեսակներից:

Գյուղապետարանների աշխատակազմի անդամների ճնշող մեծամասնությունը (93,8 %) գտնում է, որ արգելավայրերը կնպաստեն համայնքային բնապահպանական ծրագրերի ստացմանը և իրականացմանը: Այս կարծիքին են մանկավարժների 67,4 և համայնքների այլ բնակիչների 63,8 %-ը:

Հարցման մասնակիցների ավելի քան 58,0%-ը գտնում է, որ նոր արգելավայրերը կնպաստեն համայնքի վարչական սահմաններում գտնվող բնական օբյեկտների և պատմամշակույթային հուշարձանների պահպանությանը: Այս հարցում համեմատաբար լավատես են գյուղապետարանների աշխատակիցները (78,1 %) և մանկավարժները (58,7 %): Սոցիալական այլ խմբերում հարցվողների 52,1 %-ը նույնպես վստահ է այս հարցում:

4.3. Բնապահպանական օրենքների վերաբերյալ բնակչության գիտելիքների մակարդակը

Բնապահպանական օրենքների վերաբերյալ հարցումների վերլուծությունից պարզվում է, որ հարցվողների մեծ մասը ծանոթ չէ ոլորտը կարգավորող օրենքներին: Հարցվողների միայն 14,5 %-ն է նշել, որ գիտի այն օրենքները, որոնք վերաբերվում են բնապահպանության ոլորտին: Մասամբ ծանոթ են ոլորտը կարգավորող օրենքներին մասնակիցների 43,6 %-ը:

Թիրախային խմբերից համեմատաբար լավ են տեղեկացված գյուղապետարանների աշխատակազմի անդամները, թեև այս դեպքում ևս դրական պատասխանները կազմել են ընդամենը 18,7 %: Այս առումով վիճակը համեմատաբար մխիթարական է Քաջարան համայնքում, որտեղ քաղաքապետարանի աշխատակազմի անդամների 30,0 %-ը ծանոթ է բնապահպանական օրենքներին: Մասամբ ծանոթ են Խաչիկ, Ծավ համայնքների գյուղապետարանի աշխատակազմի բոլոր և Ագարակաձորի գյուղապետարանի հարցվածների 83,3 %-ը: Հարցմանը մասնակցած մանկավարժներից միայն Գեղի, Ծավ և Քաջարան համայնքներում են ծանոթ բնապահպանական օրենքներին՝ համապատասխանաբար 20,0%, 12,5 % և 7,7 %, իսկ մասամբ ծանոթ են համապատասխանաբար 60,0 %, 62,5 % և 76,9 %-ը: Թիրախային այլ խմբերից շուրջ

22,3 %-ն է ծանոթ բնապահպանական օրենքներին: Այս առումով առանձնանում են Ագարակաձոր և Արենի համայնքները, որտեղ դրական պատասխանները կազմում են համապատասխանաբար 35,6 % և 61,1 %: Մյուս համայնքներում այս ցուցանիշը տատանվում է 0-30,0 %-ի սահմաններում: Հարկ է նշել, որ նույնիսկ այն հարցվողները, որոնք գտնում են, որ ամբողջովին կամ մասամբ ծանոթ են բնապահպանական օրենքներին հիմնականում չեն կարողացել նշել ոլորտը կարգավորող օրենքներից որևէ մեկը:

Հարցման մասնակիցների գիտելիքները խիստ ցածր են նաև բնապահպանական խախտումների համար սահմանված տույժ և տուգանքների վերաբերյալ: Հարցվողների 12,8 %-ը գտնում է, որ տեղյակ է այն տույժ և տուգանքների մասին, որոնք սահմանված են բնապահպանական խախտումների համար, իսկ 59,9 %-ի կարծիքով տեղյակ են մասամբ: Թիրախային խմբերից համեմատաբար բարձր է գյուղապետարանների աշխատակազմերի անդամների տեղեկացվածությունը (ծանոթ եմ՝ 28,1 %, մասամբ ծանոթ եմ՝ 59,4 %): Մանկավարժներից և այլ խմբերից ստացված պատասխաններն ունեն հետևյալ պատկերը.

- ծանոթ եմ՝ համապատասխանաբար 10,9 % և 9,6 %,
- մասամբ ծանոթ եմ՝ համապատասխանաբար 65,2 % և 56,4 %:

Որպես օրինաչափություն հարկ է նշել, որ այս հարցին դրական պատասխանողները միայն ընդհանուր գծերով են ծանոթ բնապահպանական խախտումների համար սահմանված տույժ և տուգանքներին և հիմնականում չգիտեն խախտումների անվանացանկն ու տույժ և տուգանքների չափը:

Հարցումների արդյունքները վկայում են, որ հարցման մասնակիցները (94,2 %-ը) հիմնականում կարևորում են գիտելիքների և իրազեկության մակարդակի բարձրացման դերը բնության արժեքների պահպանության գործում: Հարցվողների շուրջ 37,8 %-ը գտնում է որ, իրազեկության և գիտելիքների մակարդակի բարձրացումը զգալիորեն կնպաստի բուսական և կենդանական աշխարհի պահպանության, պաշտպանության և վերարտադրության աշխատանքների բարելավմանը, իսկ 56,4 %-ը՝ որոշ չափով: Հարցման մասնակիցների միայն 5,2 %-ն է գտնում, որ գիտելիքների և իրազեկության մակարդակի բարձրացումը չի նպաստի բնության արժեքների պահպանության աշխատանքների բարելավմանը:

4.4. Բնապահպանության ոլորտում առավել կարևոր դեր ունեցող կառույցների վերաբերյալ պատկերացումները

Բնապահպանության ոլորտում առավել կարևոր դեր ունեցող կառույցների վերաբերյալ պատկերացումների բացահայտման նպատակով տրված հարցին, թե ովքե՞ր առավել վճռական դեր կարող են ունենալ բնապահպանության ոլորտում չարաշահումները կանխելու գործում, ստացվել են հետևյալ պատասխանները, ըստ որում հարցվողը կարող էր նշել մեկից ավելի տարբերակներ.

ա/ համայնքի բնակչությունը – 59,3 %.

բ/ մարզպետարանը – 11,6 %.

գ/ գյուղապետարանը – 58,7 %.
դ/ բնապահպանական տեսչությունը – 29,1 %.
ե/ հասարակական կազմակերպությունները – 13,4 %.
զ/ իրավապահ մարմինները – 32,6 %:

Հարցումների արդյունքները վկայում են, որ մասնակիցները հիմնականում վստահում են բնակիչների կարողություններին և ՏԻՄ-երին:

4.5. Արգելավայրերի արդյունավետ կառավարման գործընթացներում համայնքների մասնակցության հնարավորությունները

Այն հարցին, թե ինչպե՞ս եք պատկերացնում համայնքի և նոր ստեղծվող արգելավայրի փոխադարձ արդյունավետ համագործակցությունը, հարցման մասնակիցների 90,7%-ի կարծիքով այն կարող է կարգավորվել փոխադարձ համագործակցության պայմանագրով: Հարցվողների միայն 7,6 %-ն է գտնում, որ համայնքի և արգելավայրի միջև արդյունավետ համագործակցություն հնարավոր չէ: Հարցման արդյունքների վերլուծությունից պարզվել է, որ հարցվածների 78,5 %-ի կարծիքով արգելավայրը առավել արդյունավետ կկառավարվի համատեղ՝ գյուղապետարանի և արգելավայրը կառավարող կազմակերպության կողմից: 34,3 %-ը գտնում է, որ նոր ստեղծվող արգելավայրը պետք է կառավարվի գյուղապետարանի կողմից, իսկ 47,7 %-ի կարծիքով՝ հարակից համայնքների կողմից ստեղծված միավորման կողմից: 14,5 %-ը նշել են նաև արգելավայրի կառավարման հնարավորությունը մարզպետարանի կողմից:

Պատասխանների համադրումից հստակ է, որ հարցման մասնակիցների մեծ մասն իրատեսական են համարում համայնքների մասնակցությունը նոր ստեղծվող արգելավայրերի կառավարման գործընթացներում:

4.6. Արդյունքների ամփոփում

Ամփոփելով նոր ստեղծվող արգելավայրերին հարակից համայնքներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

1. արգելավայրերի ստեղծման նպատակների և դրանցում պահպանվող արժեքների վերաբերյալ ցածր է բնակչության տեղեկացվածության մակարդակը.
2. արգելավայրերը կարող են զգալի դեր ունենալ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման և զբոսաշրջության զարգացման գործում.
3. համայնքներում անբավարար են բնակչության գիտելիքները բնապահպանական օրենքների և բնապահպանական խախտումների համար սահմանված տույժ և տուգանքների վերաբերյալ.
4. բնակիչները կարևորում են գիտելիքների դերը բնապահպանության ոլորտում աշխատանքների բարելավման գործում.

5. բնապահպանության ոլորտում չարաշահումների կանխման գործում հարցման մասնակիցները առավել վստահում են բնակիչների ներուժին և ՏԻՄ-երին.
6. համայնքները կարող են արդյունավետ համագործակցել արգելավայրերի հետ, ինչպես նաև մասնակցել կառավարման գործընթացին.
7. հարցվորների կարծիքով արգելավայրերի կառավարմանը համայնքի մասնակցության նախընտրելի տարբերակներ են համատեղ կառավարումը գյուղապետարանի և արգելավայրը կառավարող կազմակերպության կամ համայնքների կողմից ստեղծված միավորման միջոցով.
8. համայնքի կարողությունների ներկա վիճակը կարող է զգալի դժվարություններ ստեղծել ինքնուրույն ստանձնելու և արդյունավետ իրականացնելու արգելավայրի կառավարումը:

<u>Առաջարկվող քայլերը.</u> Նոր ստեղծվող արգելավայրերի վերաբերյալ բնակչության տեղեկացվածության և գիտելիքների բարձրացման ուղղությամբ միջոցառումներն անհրաժեշտ է ամրագրել արգելավայրերի կառավարման պլաններում: Արգելավայրերի ստեղծման գործընթացին զուգահեռ անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները.

1. ծրագրով նախատեսված ուսումնական և կրթական գործընթացներում ներգրավել հարակից համայնքների բնակչության սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչներին՝ յուրաքանչյուր խմբի համար մշակելով համապատասխան ուսումնա-թեմատիկ պլաններ.
2. քննարկումներ կազմակերպել համայնքներում համայնքային զարգացման ծրագրերի որոշման, արգելավայրերի կառավարման հիմնախնդիրների բացահայտման, բնապահպանության ոլորտում շահագրգիռ կողմերի միջև ծագած կոնֆլիկտների պատճառների և դրանց վերացման ուղիների որոշման, շահագրգիռ կողմերի միջև արդյունավետ համագործակցություն հաստատելու հարցերի շուրջ՝ քննարկումներին ներգրավելով նաև տարածքային կառավարման մարմիններին, ձեռնարկատերերին, զանգվածային լրատվության միջոցներին և հասարակական կազմակերպություններին.
3. արգելավայրերի կառավարման պլանների մշակման ընթացքում ակտիվ ներգրավել համայնքներին և մյուս շահագրգիռ կողմերին՝ նպատակ հետապնդելով համագործակցության շրջանակներում հստակ որոշելու կառավարման պլաններում ընդգրկվող գործողությունների պատասխանատու կողմերին:
4. մշակել արգելավայրերի կառավարման երկու կոնկրետ մոդելներ՝ զուտ համայնքային կառավարում և համատեղ կառավարում, նախատեսնելով միջոցառումների ցանկ, ուղղված արգելավայրերի կառավարման ոլորտում համայնքների կարողությունների ուժեղացմանը:

ԲԱԺԻՆ 5

Գործող և նոր ստեղծվող արգելավայրերին հարակից համայնքներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների համեմատական վերլուծություն

Գործող և նոր ստեղծվող արգելավայրերին հարակից համայնքներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների համեմատական վերլուծության ընթացքում բացահայտվեցին Աղյուսակ 6-ում բերված առանձնահատկությունները:

Աղյուսակ 6

ՈՒսումնասիրությունների արդյունքների համեմատական վերլուծություն

Հ/Հ	Գործող և նոր ստեղծվող արգելավայրերին հարակից համայնքներում բացահայտված առանձնահատկություններ	
	Գործող արգելավայրերին հարակից համայնքներ	**Նոր ստեղծվող արգելավայրերին հարակից համայնքներ**
1.	Արգելավայրերի առկայությունը տեսանելի ազդեցություն չունի համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման վրա	Արգելավայրերի առկայությունը տեսանելի ազդեցություն կունենա համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման վրա
	Գործող և նոր ստեղծվող արգելավայրերին հարակից համայնքներում բացահայտված ընդհանրություններ	
1	Գյուղատնտեսության ճյուղերի վարման ցածր մակարդակ	
2	Համայնքամերձ տարածքների բնական պաշարներից բնակչության կախվածության բարձր մակարդակ	
3	Արգելավայրերի ստեղծման նպատակների և դրանցում առկա արժեքների վերաբերյալ անտեղյակություն	
4	Բնապահպանության ոլորտը կարգավորող օրենսդրության վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակ	
5	Բնական պաշարների պահպանության բարելավման գործում գիտելիքների մակարդակի կարևորության գիտակցում	
6	Բնապահպանության ոլորտում իրավախախտումների կանխման գործում համայնքների բնակչության և ՏԻՄ-երի վճռական դերակատարության գիտակցում, ինչպես նաև բնապահպանական տեսչության, իրավապահ մարմինների ու հասարակական կազմակերպությունների նկատմամբ վստահության պակաս	
7	Համայնքի և արգելավայրի միջև արդյունավետ համագործակցության հնարավորության գիտակցում	

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ 1

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Մարզ ----------
Համայնք ----------
Բնակչության թիվը ---------- ,
որից
տղամարդ ----------
կին ----------

Հողատարածքը ---------- հա
Վարելահող՝ ընդամենը ---------- հա,
որից մշակվում է՝ ---------- հա
հացահատիկային մշակաբույսեր ---------- հա
կերային մշակաբույսեր ---------- հա
բանջարաբոստանային մշակաբույսեր ------ հա
կարտոֆիլ ---------- հա
այգիներ ---------- հա
Անտառային տարածք ---------- հա
Խոտհարք ---------- հա
Արոտ՝ ընդամենը ---------- հա,
որից հեռագնա ---------- հա

Անասնագլխաքանակը՝ ընդամենը ---------- ,
որից խոշոր ---------- գլուխ
մանր ---------- գլուխ
խոզ ---------- գլուխ

Համայնքի նախորդ տարվա (2009 թ.)բյուջեն,
որից սեփական հավաքագրումներ՝
նախատեսված---------- մլն. Դրամ
փաստացի ---------- մլն. Դրամ
պետական դոտացիա՝
նախատեսված ---------- մլն. Դրամ
փաստացի ---------- մլն. Դրամ

Համայնքի ղեկավար՝ / /

<<_____>> _____ **2010թ**

Հավելված 2

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ 2

Հայաստանում գործող արգելավայրերի վերաբերյալ համայնքների իրազեկվածության մակարդակի գնահատման

Սոցիալական խմբերը ՝ ծառայողներ, ձեռնարկատերեր, մենատնտեսներ, ուսանողներ, թոշակառուներ, գործազուրկներ

- Մարզ _____
- Համայնք _____

1. Գիտեք արդյո՞ք, թե ինչ նպատակով են ստեղծվում արգելավայրերը.

   Այո ☐ **Ոչ** ☐

2. Տեղյակ եք արդյո՞ք, որ Ձեր համայնքին կից գոյություն ունի պետական արգելավայր.

   Այո ☐ **Ոչ** ☐

3. Եթե այո, ապա ինչպե՞ս է կոչվում արգելավայրը _____

3. Տեղյակ եք արդյո՞ք, ի՞նչ արժեքների (բուսական, կենդանական, ջրային և այլն) հիման վրա է ստեղծվել Ձեր համայնքին հարակից արգելավայրը.

   Այո ☐ **Ոչ** ☐

4. Եթե այո, ապա նշեք այն արժեքները, որոնց պահպանության նպատակով ստեղծվել է Ձեր համայնքին հարակից արգելավայրը.

   _____

   _____

5. Ինչպիսի՞ ազդեցություն ունի արգելավայրը համայնքի բնակիչների սոցիալական վիճակի վրա.

   ա/ բնակիչները աշխատում են արգելավայրում ՝ **այո** ☐ **ոչ** ☐

   բ/ արգելավայրի առկայությունը նպաստում է համայնքային բնապահպանական և այլ ծրագրերի ստացմանն ու իրականացմանը՝ **այո** ☐ **ոչ** ☐

   գ/ արգելավայրի տարածքից հավաքում են սննդում օգտագործվող բուսատեսակներ և սնկեր՝ **այո** ☐ **ոչ** ☐

   դ/ արգելավայրի տարածքում իրականացնում են արածեցում՝ **այո** ☐ **ոչ** ☐

ե/ արգելավայրի տարածքում իրականացնում են խոտհունձ՝ **այո** ☐ **ոչ** ☐
զ/ արգելավայրի տարածքից մթերում են վառելափայտ՝ **այո** ☐ **ոչ** ☐

է/ արգելավայրի տարածքում զբաղվում են մեղվապահությամբ **այո** ☐ **ոչ** ☐
ը/ համայնքի բնակիչների սոցիալ տնտեսական վիճակի վրա արգելավայրի ազդեցության այլ դրսևորումներ _____

_____

6. Արդյո՞ք արգելավայրն ունի սահմանափակող ազդեցություն համայնքի բնակիչների վրա.

Այո ☐ **ոչ** ☐

7. Եթե այո, նշեք որո՞նք են դրանք _____

_____

8. Արդյո՞ք արգելավայրում իրականացվում է զբոսաշրջություն.

Այո ☐ **ոչ** ☐

9. Եթե այո, նշել, ինչպե՞ս է նպաստում զբոսաշրջությունը համայնքի բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման վրա.

ա/ արգելավայրի անվանումը պայմանավորված է համայնքի կամ համայնքում առկա որևէ արժեքի անվան հետ և նպաստում է զբոսաշրջիկների հոսքին դեպի համայնք. **Այո** ☐ **ոչ** ☐

բ/ արգելավայրի այցելուները օգտվում են համայնքի ենթակառուցվածքներից (սննդի և վաճառքի կետեր, սպասարկման օբյեկտներ, հյուրանոցներ).

Այո ☐ **ոչ** ☐

գ/ արգելավայրի այցելուները օգտվում են համայնքում պատրաստված տեղական ապրանքատեսակներից

այո ☐ **ոչ** ☐

11. Նշել բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի վրա արգելավայրի ազդեցության վերաբերյալ այլ տեսակետներ, եթե այդպիսիք առկա են _____

_____

12. Ծանոթ եք արդյո՞ք բնապահպանական օրենքներին.

Այո ☐ **մասամբ** ☐ **ոչ** ☐

13. Եթե այո, նշեք, ո՞ր օրենքներին եք ծանոթ _____

_____

_____

_____

14. Գիտեք արդյո՞ք, ինչպիսի տույժեր և տուգանքներ են սահմանված բնապահպանական խախտումների համար.

Այո ☐ **մասամբ** ☐ **ոչ** ☐

15. Ձեր կարծիքով ովքե՞ր կարող են առավել վճռական դեր ունենալ բնապահպանության ոլորտի չարաշահումները կանխելու գործում.

Համայնքի բնակչությունը **մարզպետարանը** **գյուղապետարանը** ☐

բնապահպանական տեսչությունը **Հ□ները** **իրավապահ մարմինները** ☐

16. Ձեր կարծիքով բնակչության գիտելիքների և իրազեկության մակարդակի բարձրացումը որքանո՞վ կնպաստի բուսական և կենդանական աշխարհի և այլ արժեքների պահպանության, պաշտպանության և վերարտադրության աշխատանքների բարելավմանը.

Մեծ չափով ☐ **որոշ չափով** ☐ **չի նպաստի** ☐

17. Ինչպե՞ս եք պատկերացնում համայնքի և արգելավայրի փոխադարձ արդյունավետ համագործակցությունը.

ա/ համայնքի և արգելավայրի միջև հարաբերությունները կարգավորվում են փոխադարձ համագործակցության պայմանագրով՝ **այո** ☐ **ոչ** ☐

բ/ արգելավայրի և համայնքի միջև համագործակցության հնարավորություններ չկան ☐

գ/ արգելավայրի և համայնքի միջև համագործակցության այլ առաջարկներ

_____

_____

18. Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող է Ձեր համայնքը մասնակցել արգելավայրի կառավարմանը.

ա/ արգելավայրի կառավարում գյուղապետարանի և արգելավայրը կառավարող կազմակերպության հետ համատեղ. **այո** ☐ **ոչ** ☐

բ/ արգելավայրի կառավարում գյուղապետարանի միջոցով.

այո ☐ **ոչ** ☐

գ/ արգելավայրի կառավարում հարակից համայնքների կողմից ստեղծված միավորման միջոցով. **այո** ☐ **ոչ** ☐

դ/ արգելավայրի կառավարում մարզպետարանի միջոցով. **այո** ☐ **ոչ** ☐

ե/ արգելավայրի կառավարման ձևերի վերաբերյալ այլ առաջարկներ _____

_____

Տվյալներ Ձեր մասին

19. Սեռը՝ արական ☐ իգական ☐

20. Տարիքը՝

21. Կրթությունը՝

տարրական ☐ միջնակարգ ☐ միջն.մասնագիտական ☐ բարձրագույն ☐

22. Մասնագիտությունը _____ _____

23. Սոցիալական խումբը և զբաղմունքը՝

ծառայող /մտավորական ☐ ձեռներեց – գործարար ☐ մենատնտես ☐

սովորող /ուսանող ☐ գործազուրկ ☐ թոշակառու ☐

Շնորհակալություն

Հավելված 3

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ 3

ՀՀ Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում նոր ստեղծվող արգելավայրերի վերաբերյալ համայնքների իրազեկության մակարդակի գնահատման

Սոցիալական խմբերը ՝ ծառայողներ, ձեռնարկատերեր, մենատնտեսներ, ուսանողներ, թոշակառուներ, գործազուրկներ

- Մարզ _____
- Համայնք _____

1. Գիտեք արդյո՞ք, որ ձեր համայնքին հարակից տարածքներում ստեղծվում է նոր արգելավայր. **այո** ☐ **ոչ** ☐

2. Գիտեք արդյո՞ք արգելավայրի ստեղծման նպատակը. **այո** ☐ **ոչ** ☐

3. Եթե այո, ապա հակիրճ ձևակերպեք նպատակը. _____
_____

4. Նախատեսվող արգելավայրի տարածքում ի՞նչ արժեքներ են Ձեզ հայտնի (բուսական, կենդանական, ջրագրական, պատմամշակութային և այլն). _____
_____

5. Օգտվում եք արդյո՞ք այդ տարածքի բնական պաշարներից. **այո** ☐ **ոչ** ☐

6. Եթե այո, նշեք օգտագործման եղանակները (արածեցում, խոտհունձ, սննդում օգտագործվող բույսերի և սնկերի հավաք, վառելափայտի մթերում և այլն). _____
_____
_____

7. Արդյո՞ք արգելավայրի ստեղծումը կնպաստի տարածքի բնական պաշարների և պատմամշակութային հուշարձանների պահպանությանը. **այո** ☐ **ոչ** ☐

8. Եթե ոչ, նշեք պատճառը. _____

9. Ձեր կարծիքով ինչպիսի՞ դրական ազդեցություն կունենա արգելավայրը համայնքի բնակիչների սոցիալ - տնտեսական վիճակի վրա.
ա/ արգելավայրի տարածքից սննդում օգտագործվող բուսատեսակների և սնկերի հավաքի կանոնանակարգումը կնպաստի դրանց պաշարների ավելացմանը.
այո ☐ **ոչ** ☐

բ/ արգելավայրի ստեղծումը կնպաստի զբոսաշրջիկների հոսքին դեպի համայնք.

այո ☐ **ոչ** ☐

գ/ զբոսաշրջիկները կօգտվեն համայնքի ենթակառուցվածքներից (վաճառքի և սննդի կետեր, սպասարկման ծառայություններ, հյուրանոցային բիզնես) և կնպաստի տեղական ապրանքատեսակների արտադրության զարգացմանը.

այո ☐ **ոչ** ☐

դ/ արգելավայրի առկայությունը կնպաստի բնապահպանական և համայնքային ծրագրերի ստացմանն ու իրականացմանը. **այո** ☐ **ոչ** ☐

ե/ համայնքի սոցիալ- տնտեսական վիճակի վրա արգելավայրերի ազդեցության դրական այլ դրսևորումներ _____

_____

10. Կարծում եք արդյո՞ք, որ ստեղծվող արգելավայրը կնպաստի Ձեր համայնքի վարչական տարածքում գտնվող պատմամշակութային և բնական օբյեկտների առկա վիճակի բարելավմանը. **այո** ☐ **ոչ** ☐

11. Ծանո՞թ եք արդյոք բնապահպանական օրենքներին.

այո ☐ **մասամբ** ☐ **ոչ** ☐

12. Եթե այո, ապա նշեք, ո՞ր օրենքներին եք ծանոթ. _____

_____

13. Գիտեք արդյո՞ք, ինչպիսի տույժեր և տուգանքներ են սահմանված բնապահպանական խախտումների համար. **այո** ☐ **մասամբ** ☐ **ոչ** ☐

14. Ձեր կարծիքով ովքե՞ր կարող են առավել վճռական դեր ունենալ բնապահպանության ոլորտում չարաշահումները կանխելու գործում.

համայնքի բնակչությունը ☐ **մարզպետարանը** ☐ **գյուղապետարանը** ☐

բնապահպանական տեսչությունը ☐ **ՀԿ-ները** ☐ **իրավապահ մարմինները** ☐

15. Ձեր կարծիքով բնակչության գիտելիքների և իրազեկության մակարդակի բարձրացումը որքանո՞վ կնպաստի բուսական և կենդանական աշխարհի և այլ արժեքների պահպանության, պաշտպանության և վերարտադրության աշխատանքների բարելավմանը.

մեծ չափով ☐ **որոշ չափով** ☐ **չի նպաստի** ☐

16. Ինչպե՞ս եք պատկերացնում համայնքի և ստեղծվող արգելավայրի համագործակցությունը.

ա/ համայնքի և արգելավայրի միջև հարաբերությունները կկարգավորվեն փոխադարձ համագործակցության պայմանագրով. **այո** ☐ **ոչ** ☐

գ/ համայնքի և արգելավայրի միջև համագործակցության հնարավորություններ չեն կարող լինել ☐

դ/ այլ կարծիքներ _____

_____

17. Ձեր կարծիքով ինչպե՞ս կարող է համայնքը մասնակցել արգելավայրի կառավարմանը.

ա/ արգելավայրի կառավարում գյուղապետարանի և արգելավայրը կառավարող կազմակերպության հետ համատեղ. **այո** ☐ **ոչ** ☐

բ/ արգելավայրի կառավարում գյուղապետարանի միջոցով. **այո** ☐ **ոչ** ☐

գ/ արգելավայրի կառավարում հարակից համայնքների կողմից ստեղծված միավորման միջոցով. **այո** ☐ **ոչ** ☐

դ/ արգելավայրի կառավարում մարզպետարանի միջոցով. **այո** ☐ **ոչ** ☐

ե/ այլ առաջարկներ _____

_____

_____

Մի քանի տվյալներ Ձեր մասին

18. Սեռը՝ արական ☐ իգական ☐

19. Տարիքը՝

20. Կրթությունը՝ տարրական ☐ միջնակարգ ☐ միջն.մասնագիտական ☐ բարձրագույն ☐

21. Մասնագիտությունը _____

22. Սոցիալական խումբը և զբաղմունքը՝ ծառայող /մտավորական ☐ մենատնտես ☐ ձեռներեց - գործարար ☐ սովորող /ուսանող ☐ գործազուրկ ☐ թոշակառու ☐

Շնորհակալություն